# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/101 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր**

**03 նոյեմբերի 2025թ.**

2025 թվականի հոկտեմբերի 13-ից նոյեմբերի 3-ը ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ Արազափ, Հայկավան, Մրգաշատ բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/101 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ն. Դարբինյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ, |
| Ա. Հովհաննիսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ, |
| Թ. Աբգարյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի առաջատար մասնագետ, |
| Է. Մարտիրոսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ, |
| Դ. Հովակիմյան՝ | Մեծամորի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Դարբինյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

6. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025 թվականի հոկտեմբերի 13-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի վարչական կենտրոն 1 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 10:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված գնման գինը.

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արազափ բնակավայրի 5-րդ և 6-րդ փողոցների ասֆալտապատման, մայթերի կառուցման և ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ | 89,495,084.96 |
| 2 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Հայկավան բնակավայր 13-րդ, 28-րդ և 29-րդ փողոցների ասֆալտապատում ջրահեռացման համակարգի կառուցման և մայթերի հիմնանորոգման աշխատանքներ | 78,670,138.04 |
| 3 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրի 2-րդ, 3-րդ և 10-րդ փողոցների ասֆալտապատման, մայթերի կառուցման և ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ | 213,674,424.57 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/101 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊԸ | ք. Արտաշատ, Ներսիսյան 17Ա | +37496225566 | suren88@list.ru | 05020638 |
| 2 | ՃԱՆՇԻՆՎԱՐՊԵՏ | Ք. Արմավիր Իսահակյան 97 | 093955565 | davitdavtyan2020 | 04400229 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ՓԲԸ | | | 0@mail.ru | |
| 3 | «ԷՅԷՄԴԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | Արագածոտն, Աշտարակ, Մուղնի 2 թաղամաս 191 | +37493223332 | amd.constr@gmail.com | 05027938 |
| 4 | «Դոռզնակ» ՍՊԸ | - | - | - | - |
| 5 | «ԷՆ ՇԻՆ»ՍՊԸ | ք. Երևան , Անտառային 170 | 093 700001 | haykavagyan@hotmail.com | 02664949 |
| 6 | «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ | ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Սարուխան, Հ.Աբրահամյան 1 | +(374)93908990 | edgarsaruxan@mail.ru | 08423013 |
| 7 | «ՍԱՍԱՎԱԳ» ՍՊԸ և «Ճանշինվարպետ» ՓԲԸ կոնսորցիում | ՀՀ, ք. Երևան, Հրաչյա Աճառյան փող. 34, բն. 11 Արմավիր մարզ, գ. Ջանֆիդա | +37491304114 | sasavagltd@gmail.com | 01064555 04400229 |
| 8 | «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիում | Ք. Երևան Պարոնյան 21/4 Ք. Երևան Կոմիտասի պ. 5 | 055101040 012202002 | contact.urbandevelopment@gmail.com info@legendint.com | 02917998 00200833 |
| 9 | «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ | Գեղարքունիքի մարզ գ. Լիճք Ա6 թղմ. 12փ, տ1 | 093223288 | vardangroup@mail.ru | 08422964 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով /ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

- «Դոռզնակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով բացակայում էր հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ Հրավերի 2.4 կետով սահմանված հայտի ապահովումը և 2.5 կետով պահանջվող գնային առաջարկի փաստաթուղթը՝ համաձայն հավելված N 2-ի:
- «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի փաստաթղթում՝ համաձայն հավելված N 2-ի, բացակայում էր մասնակցի անվանումը և մասնակցի ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը:
- «ՍԱՍԱՎԱԳ» ՍՊԸ և «Ճանշինվարպետ» ՓԲԸ կոնսորցիումի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը հաստատված են մի անձի կողմից ում նման լիազորություններ վերապահված չեն:

• «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված դիմում հայտարարության փաստաթղթում համաձայն հավելված 1-ի, 1-ին և 2-րդ կետում նշված է այլ ընթացակարգի ծածկագիր, մասնավորապես՝ փաստաթղթում նշված է՝ «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2025/63Շ», սակայն մասնակիցը հայտ է ներկայացրել «ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/101» ծածկագրով գնման ընթացակարգին, միաժամանակ՝ հայտով ներկայացված Սուրեն Անդրանիկի Բաղդասարյանին տրված լիազորագիրը հաստատված չէ բնօրինակով:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Գնման առարկայի անվանումը | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գնման գին | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Հայերեն | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արազափ բնակավայրի 5-րդ և 6-րդ փողոցների ասֆալտապատման, մայթերի կառուցման և ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ | «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ և «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիում | 89,495,084.96 | 45,000,000.00 | 9,000,000.00 | 54,000,000.00 |
| | | «ԷՆ ՇԻՆ» ՍՊԸ | | 56,680,000.00 | 11,336,000.00 | 68,016,000.00 |
| | | «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊԸ | | 65,629,000.00 | 13,125,800.00 | 78,754,800.00 |
| | | «ՍԱՍԱՎԱԳ» ՍՊԸ և «Ճանշինվարպետ» ՓԲԸ կոնսորցիում | | 69,900,000.00 | 13,980,000.00 | 83,880,000.00 |
| 2 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Հայկավան բնակավայր 13-րդ, 28-րդ և 29-րդ փողոցների ասֆալտապատում ջրահեռացման համակարգի կառուցման և մայթերի հիմնանորոգման աշխատանքներ | «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ և «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիում | 78,670,138.04 | 49,166,000.00 | 9,833,200.00 | 58,999,200.00 |
| | | «ԷՆ ՇԻՆ» ՍՊԸ | | 49,168,750.00 | 9,833,750.00 | 59,002,500.00 |
| | | «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊԸ | | 57,691,000.00 | 11,538,200.00 | 69,229,200.00 |
| | | ՃԱՆՇԻՆՎԱՐՊԵՏ ՓԲԸ | | 60,750,000.00 | 12,150,000.00 | 72,900,000.00 |
| 3 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրի 2-րդ, 3-րդ և 10-րդ փողոցների ասֆալտապատման, մայթերի | «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ և «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիում | 213,674,424.57 | 123,330,000.00 | 24,666,000.00 | 147,996,000.00 |
| | | «ԷՆ ՇԻՆ» ՍՊԸ | | 137,107,740.00 | 27,421,548.00 | 164,529,288.00 |
| | | «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ | | 140,740,000.00 | 28,148,000.00 | 168,888,000.00 |
| | | «ԷՅԷՄԴԻ | | 147,325,000.00 | 29,465,000.00 | 176,790,000.00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կառուցման և ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ | ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | | | | |
| | | «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ | | 148,600,000.00 | 29,720,000.00 | 178,320,000.00 |
| | | «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊԸ | | 154,900,000.00 | 30,980,000.00 | 185,880,000.00 |

2025 թվականի հոկտեմբերի 30-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 8.2 կետով սահմանված պահանջները
3. «Դոռզնակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 7.6 և 8.2 կետով սահմանված պահանջները:
4. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

2025 թվականի նոյեմբերի 3-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը:

2025 թվականի նոյեմբերի 3-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
3. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-3 | «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊԸ | բավարար |
| 2 | ՃԱՆՇԻՆՎԱՐՊԵՏ ՓԲԸ | բավարար |
| 3 | «ԷՅԷՄԴԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | բավարար |
| | «Դոռզնակ» ՍՊԸ | անբավարար |
| 1-3 | «ԷՆ ՇԻՆ»ՍՊԸ | բավարար |
| 3 | «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ | բավարար |
| 1 | «ՍԱՍԱՎԱԳ» ՍՊԸ և «Ճանշինվարպետ» ՓԲԸ կոնսորցիում | բավարար |
| 1-3 | «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիում | բավարար |
| 3 | «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ | անբավարար |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2025 թվականի նոյեմբերի 3-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստրև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գները /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1-ին | «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ<br>«ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | X | 45,000,000.00 |
| | «ԷՆ ՇԻՆ» ՍՊԸ | | 56,680,000.00 |
| | «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊԸ | | 65,629,000.00 |
| | «ՍԱՍՍԱՎԱԳ» ՍՊԸ<br>«Ճանշինվարպետ» ՓԲԸ | | 69,900,000.00 |
| 2-րդ | «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ<br>«ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | X | 49,166,000.00 |
| | «ԷՆ ՇԻՆ» ՍՊԸ | | 49,168,750.00 |
| | «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊԸ | | 57,691,000.00 |
| | ՃԱՆՇԻՆՎԱՐՊԵՏ ՓԲԸ | | 60,750,000.00 |
| 3-րդ | «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ<br>«ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | X | 123,330,000.00 |
| | «ԷՆ ՇԻՆ» ՍՊԸ | | 137,107,740.00 |
| | «ԷՅԷՄԴԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | | 147,325,000.00 |
| | «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ | | 148,600,000.00 |
| | «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊԸ | | 154,900,000.00 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման ընթացակարգի շրջանակում հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Դարբինյան _______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Հովհաննիսյան _______________

Թ. Աբգարյան _______________

Է. Մարտիրոսյան _______________

Դ. Հովակիմյան _______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան _______________